մեկնութիւնների մի ժողովածու, «ի նահանգիս Սիւնեաց. ի գաւառիս Վայոց ձոր, բարձրագլուխ մենաստանիս Գլաձոր, որ յանհմուտ և գնչու արանց Գայլաձոր ասի, յորս հօաքել. հրճելին ի սմա հարազատք եկեղոյ. հայկազլինս տոհմի ի տարփումն անճառ խնդոյ. տնօրէնութե. անմահ փեսայլին յի., ըստ եկլադական սահման պայմանի». ապա գրիչը յայտնում է, որ շատերն են գրել նոյն գիրքը Եսայի Նչեցու հրամանով: Ստացողն է «Սարգիս քհ., որ հանդերձել. է զօաւզան առուլ (s) բարունի». հաւանօրէն նոյնանուն անձը, որ 1317 թուին Նիւսացու գործերի արտագրութեան յիշատակարանում իրեն «Սարգիս աբեղայ սպասաւոր բանի» է կոչում: Նա անձամբ գրել է ձեռագրի մի մասը 302ա – 311բ. և յատուկ յիշատակարան

№ 3606, 1337 թուին գնում է բանի սպասաւոր Աւաքոր. վարդապետը և իւր չեղագիր յիշատակարանի մէջ յայտնում է, թէ «բազում ժամանակաւ աշխատեցայ առ ոտս մեծ րաբունապետացն Եսայի և Տիր(ատ)րոյ և գնեցի զսա ի հալալ ընչից իմոց ի :Ճ. մթխալ արծաթ ի Գալիձորին ի թվ. հայոց Չ: Չ: Ձ» (Ցուց. Բ. 89, Ձեռ. էջմ. № 3606. 274բ.): Այս յիշատակարանի նշանակութիւնը կրկնակի է, նախ առ ու ծախի մի տարբեր եղանակի օրինակ, և երկրորդ՝ թէ Դաւիթ վախճանած է արդէն և նորա տեղն է անցել իբրեւ օգնական ուսուցչապետ Տիրատուր վարդապետ: Արդեօ՞ք սա նոյն է Տիրատուր Կիլիկեցու հետ, որ 1209 թուին գրել է № 3399 նկարազարդ աւետարանը, հաւանական է. բայց հաստատ է, որ նա Հերմոնի դըպ-



Պատկեր 219.

ունի 305բ. «Սարգիս պիտակաբար քհ.անայ, զձեւ ունելով, բայց գործն պակաս». խնդրում է յիշել «եւ զմենակեց. եղբայրն իմ զմիւս Սգ.» (Սարգիս) (Ցուցելուած 88, Ձեռ. էջմ. № 1120/1141 (Կար. 1099), (պատկ. 226)(*):

Թադէոս գրչի ձեռքով 1303 թուին գրուած եւ Դանիէլի մեկնութիւնը Մխիթար Սասնեցու ձեռքով

րոցի հիմնադիրն է, որին յիշում է Նչեցին իւր չըրջաբերական թղթի մէջ: Նա Հերմոնում յիշւում է արդէն 1338 թուին, Ալիշանի քաղուածօրէն բերած մի յիշատակարանից(*): Եսայի Նչեցու աշակերտներից

(*) Ձեռագրի բովանդակութիւնն է՝ Ա) Ներսէս Լամբրոնացու Մեկնութիւն Առակացն Սողոմոնի 2բ — 144ա: Բ) Նոյն հեղինակի Մեկնութիւն Իմաստութեան Սողոմոնի 242ա: Գ) Վարդան վարդապետի Մեկնութիւն Երգերգոցի: Դ) 328ա. Գրիգոր Նարեկացու Մեկն. Երգերգոցի, որի վերջում (331ա) կայ այսպիսի նկատողութիւն. «Այլ աստանօր զկայ ասցէ, որ ի Գրիգորէ Նարեկա սրբոյ. վա. զի առաջինկայս զայն ունի զօրութի. զառաջագրելոցս, զոր լուսօր ասնն Այ. վդ. վկտի. եղև հաւաքեալ»:

(*) Սիսական, 125. գրիչն է Գրիգոր բանասէր, Տիրատուրի աշակերտներից: Տիրատուրի բազմաթիւ ճառերը տես Ձեռ. էջմ. № 2193/2178: Ձեռ. էջմ. № 2540, Եւագրի Խրատականք, 163ա. Տիրատուրի ձեռքով, չեղագիր. «Զամենատառապեալս ի բարեաց և զբազմահարուստ չարեաւք, զեղկելի անձնս, նուաստ Տիրատուր՝ պիտակ անուամբ վրդ. յորջորջեալ, զատայաւղ Աշախին տաւիցս. զծնաւղսն իմ և զհաբազատս և զա. երախտաւորս մեր ըստ հոգւ և ըստ մարմնո, յիշեցէք ի մաքրափայլ յաղաւթս ձեր, ով խոհեմամիտ ընթերցողք, աղաչեմ»: Մովսէս գրիչը (Ձեռ. էջմ. № 1558/1565 [Կար. 1520]) ՉՂԸ թուին «ի վանս Հերմոնի, ընդ հովանեաւ սբ. քաւարանիս Գրիգորի, առ ոտս մեծ վարժապետիս Տիրատուր կո-